

ԱԿՕՍ

Թ Ի Ի 9 5 6

2 9


Օ Գ Ո Ս Տ Ո Ս

2 0 1 4



Էզգիներուն կոչ կու գայ Ղարաբաղէն

Վերջերս Հայաստանէն Միջին Արեւելքի էզգիներուն ուղղուած էր կոչ մը, որ զան ու բնակութիւն հաստատելու Ղարաբաղի մէջ։ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Բազո Սահակեանի բանքեր Դաիթ Բաբայեան ալ ըսաւ որ հայ ժողովուրդը անփարբեր չի կրնար մնալ էզգիներուն դէմ կապարուածներուն։ Անոնք Հայաստանին մասնիկը դարձած միակ ժողովուրդն են։



«Այկազուն Ավրեցան»

Միւս կողմէ Հայաստանի Արարքին Գործոց Նախարարութենէն կը փնդեկացընեն թէ ցարդ ռեւէ էզգի Հայաստան գալու համար դիմում չէ կատարած։ Մինչ այդ Իրաքի քրդական հափուածէն հաղորդումներ կապարող Ռուսուռնէթ գործակալութեան համաձայն կարգ մը էզգիներ յաջողած են Վրաստան երթալ։ Նշենք որ այս երկրի մէջ շուրջ 20 հազար էզգիներ կ'ապրին։

Այս առթիւ, յարկապէս Հայաստանի բնակիչ էզգիներուն, անոնց Միջին Արեւելքի ցեղակիցներուն հետ ունեցած փարբերութիւններու, Հայաստանի մէջ իրենց ապրելակերպին եւ վերոյիշեալ կոչին մասին փնդեկութիւններ առնելու համար մեր աշխափակից Ֆ. Կէօքիան Տիլէր հարցումներ ուղղեց Երեւանի «Արեւմտահայոց Ուսումնա-

սիրութեան կեդրոնի» փնօրէն Հայկազուն Ավրեցեանի.

Սրորեւ՝ Ավրեցեանի այս մասին բացատրութիւնները.-

- Նման կոչով հանդէս է եկել ոչ թէ Հայաստանի, այլ Ղարաբաղի Հանրապետութեան կառավարութիւնը, որը լաւ է ընդունուել ոչ միայն էզգիների, այլեւ հայերի կողմից։ Սակայն հայաստանաբընակ էզգիներն այն համոզմունքն ունեն, որ իրենց իրաւունքներն եւ ազատութեան համար պէտք է պայքարեն։

Էզգիները որեւէ փարբերութիւն չեն դնում իրենց եւ Հայաստանից դուրս ապրող էզգիների միջեւ, հանդէս են գալիս որպէս մէկ ժողովուրդ։ Ելոյթներով, ցոյցներով աջակցում են արտասահմանցի իրենց հայրենակիցներին։ Այս պայքարում նրանց հետ համերաշխ են եւ հայերը, եւ Հայաստանի միւս փոքրամասնութիւնները, որոնց յաճախ կարելի է տեսնել էզգիների կազմակերպած հանրահաւարներում եւ այլ միջոցաւումների ժամանակ։ Հայաստանը միակ երկիրն է, որպէս էզգիների համար սպեղծուել է գիր. նրանք ունեն էզգիերէն լեզուի եւ գրականութեան ուսուցմամբ դպրոցներ՝ թուով 23։ Բացի դասագրքերից՝ հրապարակում է նաեւ էզգիերէն լեզուով գեղարուեստական գրականութիւն։ Ունեն մայրենի լեզուով լրագիր՝ «Էզգիխանա» եւ ռափիօհաղորդումների ժամ։

Էզգիները Հայաստանի լիարժէք քաղաքացիներ են։ Նրանց եւ, ընդհանրապէս, որեւէ ազգային փոքրամասնութեան նկատմամբ Հայաստանում երբեւէ խարկական վերաբերմունք չի եղել։ Բոլորն ապրում են բնականոն կենսով, առեւտրոր անում նոյն խանութներում եւ շուկաներում, ծառայում նոյն բանակում, սովորում նոյն համալսարաններում։ Քաղաքներում կապարում են քաղաքային կենսինքն բնորոշ աշխարհանքներ։ Գիւղական բնակավայրերում հիմնականում զբաղւում են անասնապահութեամբ։

Այո, ճիշդ է, էզգիները չունեն խնդիրներ, որոնց պատճառը լինի պետութեան կողմից գործադրուող ազգային-կրօնական քաղաքականութիւնը կամ հայերի եւ հայաստանաբնակ միւս ժողովուրդների խարկական



վերաբերմունքը։

Ունեն մտաւորականութիւն, գրողներ, լրագրողներ, գիտնականներ, ուսուցիչներ, ազգային-հասարակական գործիչներ եւ այլն։ Պահպանել են իրենց ազգային կրօնը, փոները, ծէները, սովորութիւններն ու աւանդոյթները, ապրում են լիարժէք ազգային կենսով։ Հետաւարբետութեամբ եւ ռափոյոյով յաճախ ներկայացնում են այս ամէնը։

Գալով Միջին Արեւելքում կապարուածին, նրանց համոզմամբ ցեղասպանութիւն է, քանզի էզգիների ոչնչացումը կամ բռնի կրօնափոխութիւնը, որն այսօր ահագնացող



Էզգիներու հետ զօրակցութիւն

Միջին Արեւելքի «Իսլամ Պետութիւն» (ԻՊ) կոչեալ ահաբեկչական կազմակերպութեան յարձակումներէն փոծած էզգիներու հետ զօրակցութեան համար կազմուած է «Ընկալէն Կազգա Զօրակցութեան Համագործակցութիւն» անուն հարթակը, որ 26 Օգոստոս Երեքշաբթի, «Ճեզայի» շէնքի մէջ սարքած մամուլ յայտարարութիւնով հրապարակեց իր որդեգրած զօրակցութեան եղանակները։ Հարթակի անունով մամուլ յայտարարութիւնը կարդաց մարդու իրաւունքներու հանրաձայն գործիչ՝ Թուրքիոյ Բժիշկներու Կաճաթի նախկին նախագահ Փրոֆ. Կէնճայ Կիւրսոյ, որու կողքին փնդ բռնած էին Թուրքիոյ ազգային եւ կրօնական փոքրամասնութիւններու ներկայացուցիչներ։ Փրոֆ. Կիւրսոյ ըսաւ թէ, Թուրքիոյ, Հարթակի, Սաուդի Արաբիոյ եւ միջազգային գաղութարիքական ուժերու զօրակցութեանը գործող էլ Նուրաւ, Էլ Բալիփաւ եւ Իսլամ Պետութիւն կոչեալ հրոսակաւորները արին կը հեղեն Սուրիոյ եւ Ռոժաւալի մէջ։ Անոնք կը նպատակադրեն փարբեր ժողովուրդներուն եւ հաւարքներուն հաւասար ու ազատ միասնութիւնը կերպելու ձգտող Ռոժաւալի յեղաշրջումը կատենել։ ԻՊի դէպի Ռոժաւալ իր յարձակումին ձախողելէն ետք

Անտէրուլթեան մատնուած Մուշի եկեղեցին

Պատմական Մուշ քաղաքի մէջ Հայոց Թաղամասը այն եզակի վայրն էր, որ կը վկայէր քաղաքի պատմական անցեալին։ Ինչպէս մեր ընթերցողները պիտի յիշեն «Քալէ Մահալլէսի» կոչուած այդ տարածքը զո՛հ գացած էր քաղաքաշինութեան աշխատութիւններուն։ «Ակօս»ի հրատարակութիւններէն հտք միայն ընակելի շէնք մը եւ Հայոց եկեղեցին գերծ մնացին փլուզումէ։

Վերոնշեալ եկեղեցին մինչեւ 1958 թուական հասարակապատկան տարածք էր։ Այդ թուականէն հտք եկեղեցիին գտնուած հողամասը քաղաքի յատուկ վարչութեան կողմէ աճուրդի միջոցաւ վաճառուեցաւ։ Այժմէմէջ ընտանիքին։ Մինչ այդ եկեղեցին ալ անտէրութեան մէջ խոնարհեցաւ, տանիքը փուլ եկաւ եւ մնացին միայն չորս պատերը։ Այժմ օրինական պայքարը կը շարունակուի Այժմէմէջ ընտանիքի եւ Մուշի Քաղաքապետութեան միջեւ։



Հայապահպանութեան խոհեր

Մարդու պատմութեան շատ շահեկան հակասութիւններէն մէկն է ապագան դիտելու համար անդրադառնալ անցեալին։ Անդրադառնալ ուշացումով։ Փորձ քաղելու ջանալ անտեսուածէն։ Վերլիչումներու միջոցաւ կանխել նոյն սխալը չկրկնելու յիմարութիւնը։

Ամբողջ Հարիւր տարուայ ընթացքին այս եղաւ Հայ ժողովուրդին վիճակոյդը։ Աննախադէպ մտային, գաղափարական ու մշակութային կուտակում մը ապահովելով հանդերձ չկրցանք այդ հարստութիւնը քաղաքականութեան վերածել։ Ունեցանք նախանձնի մտաւորականութիւն, բայց փոխարէնը ճգնիմ ռազմավարութիւն։ Տառամտումներու եւ տարակարծութիւններու մէջ դժուարացանք համազգային ուղիներ որդեգրելու։ Թերացումին պատիժը բաւական դաժան եղաւ բովանդակ հայութեան համար։ Մեր պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով կորսնցուցինք հայրենիքը։ Փորձառութիւն ունէինք առանց պետականութեան, առանց ազգային բանակի, առանց դահի գոյտեսելու։ Երկիրը արշաւողներ, ազգին գահն ու դժբախտ գրաւողները ձեռք չէին տուած ազգային եկեղեցին, որուն շուրջ մենք յաջողեցանք պետականութեան փոխարինող համակարգ մը գոյացնել։ Այդ համակարգի սահմաններուն մէջ ժամանակակից կրթական դրութիւն մը հաստատել։ Կազմակերպել կատարող ընկերային կեանք մը։ Եւ այդ բոլորը յաջողեցանք սեփական երկրի սահմաններուն մէջ։

Ա. Աշխարհամարտէն հտք այդ բոլորի հետ միասին կորսնցուցինք նաեւ ամենակարեւորը՝ սոյն հարստութեան հասակ առած վայրը՝ հայրենի երկիրը։

Նախքան 1915 թիւը Հայ ժողովուրդը արդէն մայր երկրէն հեռու կառուցած էր բազմաթիւ գաղութներ։ Պահ մը յիշենք թէ արդեօք ո՞ւր տպուած էր հայրենիով զրուած առաջին գիրքը, կամ ո՞ւր հրատարակուած էր Հայերէն առաջին թերթը։ Ինչո՞ւ համար զբօսաշրջիկներու առաջարկուած տեսանելի վայրերուն ցանկին մէջ է Սրնկափուրի Հայոց եկեղեցին։ Եւ արդեօք ինչո՞ւ համար եթովպիոյ մէջ ինքնաշարժ մը վարձել ուզողը կը հանդիպի Հայ գործատէրի մը։

Բայց ցեղասպանութենէն հտք գոյացող գաղթականները բոլորովին տարբեր բնոյթ մը կը ներկայացնեն։ Եւ մենք հայերս այդ հողերուն վրայ չկրցանք ունենալ այնպիսի ձեռքբերումներ, որոնք ունեցած էինք նախորդ գաղթականներու մէջ։ Այս զրկանքի դիմաւոր գործօնն էր կէթիոյաւորները։ Յատկապէս Միջին Արեւելքի երկիրներու մէջ սիրելիները կզգիւցած ապրումներով Հայապահպանում ապահովել։ Գոյացան խաբուսիկ երեւոյթներ։ Օրինակի համար Լիբանանի մէջ արաբերէնի չտիրապետող հայախօս սերունդ ունեցանք։ Երբեք չանդրադարձանք ասոր անպատեհութեան մէջ ալ Հայրենիի չտիրապետող անդկախօս կամ ֆրանսախօս սերունդներ ունեցանք եւ երկար ժամանակ չանդրադարձանք հայերէն չգիտնալու անպատեհութիւնը։ Բայց երկու օրինակի մէջ ալ մենք մեղ մեկուսացուցինք համաշխարհայինէն։ Խնդիրները դիտեցինք միայն մեզի հետ առնչուած սահմանումով։ Չանդրադարձանք որ սահմաններու վերաբան ժամանակահատուածը կ'ապրինք։

Աթէնքի մէջ Ալէքսը ոստիկանական բռնութեան զոհ գացած պահուն բազմահազար յոյներ մարդու իրաւունքի դրդումով փողոց թափեցան։ Իսթանպուլի մէջ նոյնը պատահեցաւ։ Պէքինի էլվանի օրիւնակով։ Մինչդեռ աւանդապաշտ հայկական միտքը գերզգայուն է միայն հայու նկատմամբ։ Աշխարհ փոխուեցաւ եւ մենք կը դժուարանանք այդ փոփոխութիւնը ընկալելու եւ զարմանքով ու անտեսանքով կը դիտենք յատկապէս ալ Միջին Արեւելքի Հայ գաղթավայրերուն նստաբան պատկերը։

Կը շարունակենք այս մասին խորհրուծելու։

pakrates@yahoo.com

Հետեւանքները խիստ ծանր են

Թուրքիոյ Մարդու Իրաւունքներու հիմնարկը խումբ մը հոգեբոյժներու եւ հոգեբաններու միջոցով ուսումնասիրութիւններ կապարեց Իրաքէն փախած էզգիներու ապաստանած ճամբարներուն մէջ։ Մասնագէտներու պարրաստած փնդեկագիրը կը վկայէ ժողովուրդին ապրած սարսափին։ Անոնք տակաւին իրենց ականաւորն եղած վայրագութեան ծանր ցնցումը կ'ապրին։ Դիակները անթաղ թողելը, առեւանգուած աղջիկներու պատճառած խղճի խայթը, ականաւորն եղած վայրագութիւնները արգելք կ'ըլլան գիշերները քնանալու։ Մինչ այդ ճամբարի պայմաններն ալ բաւականին դժուար են, չքսելու համար անփանելի։ Բաժնուած կրօնները անբաւարար կը մնան գոհացուցիչ սնունդ ապահովելու համար։ Անդին տակաւին բազմաթիւ կենսանիւթեր առիասարակ կը բացակային։

Գարեջրի փառապոօն Երեւանում



ԾՈՎԻՆԱՐ ԼՈՔՄԱԿԵՐԵԱՆ
dzovinar@rambler.ru

Երեւակայէր նման մի քանիսն. ամուսնական զոյգ (կինը հայագոյ է, ամուսինը՝ գերմանացի), հեռաքնիքի առջեւ սպասուում են հաղորդմանը՝ գարեջրի մասին: Կինը նախապէս յայտնում է ամուսնուն, որ «Գիւրեն», հայերն են առաջինը գարեջուր յօրինել», ինչից գերմանացին զայրանում է «Նորից հայերը, ամէն ինչում հայերն են առաջինները, բաւական է», սակայն քիչ անց գերմանական հեռաքնիքը ի զարմանս ամուսնու պատմում է, թէ ինչպէս են հայերը գարեջուր պատրաստել եւ անուանել այն գարու գինի, որոնք պահում էին քաղաքների մէջ: Գինու մէջ լողում էր գարին եւ խրում էին քաղաքի չափերի եղէգներ. ցանկացողը եղէգն ծայրը դնում էր բերանը եւ քաշում գինին: Պարմէցին նաեւ հայկական ջրի մասին, ի դէպ անցնայներում Սեւանի ջուրը խմելու համար պիտանի էր: Գերմանացին մրիկ էր անում՝ եղէգն փոխարէն բերանում պահած Պառիկական գարեջրի շիշը եւ զայրոյթը հեղուկեղէն փոխում էր զարմանքի:

Մի քիչ պատմութիւնից

Բացի գարուց օգտագործում են նաեւ բրինձ, օրինակ, Ճապոնիայում (սաքէ), կորեկ,

աշորա, ցորեն... Թնդութիւնը կախում է ալքոլի քիմիքից, սովորաբար 3-5,5 % է լինում: Սովորաբար... Սակայն հեղուկեղէն այդ քիմիքը սկսեց գերազանցուել, սկզբից Գերմանիայում հասան 10,5 %-ի, այնուհետեւ Աստիկայում՝ 11%-ի, իսկ չեխական "X-BEER 33"-ը հասաւ 14%-ի: Վերջապէս գերմանական Schorschbrau-ն 2009-ին արտադրեց գարեջուր 40% ալքոլով եւ դա էլ գերազանցուեց սկովփիացիների նոր գարեջրով, որի սպիրտը 67,5% էր եւ այդ ուժեղ գարեջուրն անուանեցին Snake venom, այսինքն Օձի թոյն, սպիրտի քիմիքը գերազանցում էր ոչ միայն գարեջրի թնդութիւնը, այլ նաեւ փողկայի եւ whiskey-ի:

Եթէ կայ գարեջուր, ուրեմն կայ այդ

խմիչքից առաջացած քրամադրութիւն, որը կարող է վերածուել քրամ: Աշխարհում յայտնի գարեջրային փառապոօններից է Oktoberfest Միւնխիում, որը սկսում է Սեպտեմբերին եւ ւարարում է Հոկտեմբերին: Վիթսարի վրաններ են խփում, խելքից դուրս ուրախանում են: Օրերով ուրախանալը հսկում է յարուկ ծառայութիւնը, որը մասնակիցների գլխարկներին ամրացնում է լուսաթարթ լամպեր, որպէսզի դրանով յերազայում մթին գրնի փողոցներում ընկած ուժասպառ մարմինները: «Ժողովրդական քրամ» է կոչւում գարեջրի փառապոօնը Ծոյթկարպում՝ Cannstatter Volksfest: Յայտնի փառապոօններ կան Մեմ Բրիքանիայում, Չեխիայում՝ Pilsner Fest, որն ուղեկցում է համերգներ

րով եւ ներկայացումներով գարեջրի թանգարանում: Իսկ Պրոքսետում կայ նոյնիսկ գարեջրի միջազգային դարարան:

Կարապի լծում

Օգոստոսի 22-ին Երեւանի օփերայի եւ պալէի թատրոնին յարակից Կարապի լիճ քրամակայում առաջին անգամ հանրապետութիւնում անցկացուեց Գարեջրի փառապոօն: Կազմակերպիչը Երեւանի քաղաքապետարանն էր՝ «Երեւանի ամառ» ծրագրի շրջանակներում: Հերարքրիւր է, որ փառապոօնը ինչպէս առհասարակ մեր բոլոր փառապոօնները, ներգրաւեց միայն որոշակի քանակութեամբ մարդկանց, որոնք մնացին ունկնդրողի դերում, այլ ոչ մասնակցի: Դեռեւս աւանդոյթ չունի այս քրամը, մնում է ընդամենը միջոցառման շրջանակներում: Յարկապէս անվճարունակ զանգուածն էր հերարքրըրուել, սակայն քրամներով, որ կոմունիզմ չի սպասուում, հեռուից սկսեցին դիպել նրանց, ովքեր պարուրում էին խմիչքը: (Սովետի շրջանում մեզ սովորեցնում էին, որ կոմունիզմի պրեն կը յաղթի «Ամենքից ըստ ունակութեան, ամենքին ըստ պահանջի» կարգախօսը, այսինքն արարները անվճար կը քրամի):

Հայերը ուրող-խմող ազգ են. խմում են, որովհետեւ ուրում են, այլ ոչ ընդհակառակը, ուստի հերթեր գոյացան ուրեստներ իր քաղաքներում՝ «Berliner hot dog» եւ «Beer academy»: Կարապի լիճ հայելու պէս մաքուր եւ թափանցիկ ջուրը թեթեւ ծիւում էր, երբեմնի կարապները՝ սեւ եւ ճերմակ բացակայում էին: Երոյթ ունեցաւ «Ալեր-սանդրապոլ» երաժշտախումբը՝ կենդանի կարարմամբ...

«Գարեջրի քրամադրութեամբ լեցնենք մեր օրը, հիւրասիրութիւն է սպասուում անելի աքթի մարդկանց», խտարանում էին միջոցառման վարողները, սակայն իմ ուղեկիցներին չէր հրապուրում «ով անելի շար կը խմի կամ ով անելի շուր կը խմի մրցոյթները» եւ մենք անցանք օփերայի շուրջ գրնուող քաֆէներից մէկը եւ այսպէղ խմեցինք մեր պարուրած սուրճն ու գարեջուրը: Խմիչքի գաղտնիքը նրանում է, որ բաւ է մի կում ըմպեն, աշխարհը փոխում է եւ անելի հրապուրիչ է դառնում. իրականութիւնը դադարում է այդքան ճղճիմ ու ծանծաղի

երեւալ, նոյնիսկ այս Գարեջրի փառապոօնով հանդերձ: Խմելիս բացայայտեցի նաեւ օրերս կենսքին վերջ տուած ամերիկեան դերասան Ռոպին Ուիլիամսի մահուան պատճառը. նրան այլեւ ոչ խմիչքը, ոչ էլ թմրանիւթն էին օգնում իրականութիւնը փոխելու գործում:

Խմէք, պարոնայք, գարեջուր, բայց մի՛ հասէք այն աստիճանի, որ գարեջուրը ձեզ խմի եւ ի վերջոյ խորպակի:



Ասերիկին ժողովուրդը բնութիւնը չսիրեր կոր: Պրութիւն գեղեցկութիւնները չէր չօգտէ մաֆի կ'ընեն կոր, ծառ կը կորեն, բոյս կը չորցունեն կոր: Զաթը կառավարութիւնը, հիւ չկենայէն անտառները կը փճացնեն տեղը պէթօն կը տնկէ կոր, աս չբաւերի պէս, ժողովուրդն ալ ապուշ մաւ: Հանաներով տուններուն էթրաֆի ծառերը կը չորցունէ կոր: Ինչ է էղեր, տերեւ կը թափէ, պէթօն պարտէզին կիտները կ'արտատէ կոր: Բաղաքին մէջ, փողոցները թէք թիւք էտին պարտէզ ունեցող ափարթումաններ մաւ: ցած են նէ, հոնտեղերն ալ թէք թիւք ծառեր կ'ըլլան կոր պաղի: Ան ծառերը պիղիմ կորող անիւքներ կան: Մենք ալ աս բնութեան սէր չունենցող երկրին փորքամասնութիւնը ըլլալով աղուր մը մեծամասնութեան օտը յարմարցունքիք, խոյ փոխեցինք: Ժամանակին Հայ տուններ. էթրաֆի ծառերուն ճոխութիւնէն, պատու Հանին առնէի պաղքօնի, պարտէզի ծաղիկներուն չէնութիւնէն յայտնի կ'ըլլար: Հիմա անա՞նկ է... Գնայրն սանկ իմին աչքերովս նայելէն թուր մը նետեցէք. քանի դարաւոր ծառ թէլէֆէյա՞ծ է: Սէօգտէ Համերը կարելը ար-կիւրած էն: Լաֆ օյա պէրի կէլէ... Կէս կիւրերին, ծառք օտը քաշուելէն ետքը, տիպը պան մը կը թափեն կոր, քանի մը օրուան մէջ խօճա ծառք սափաւոր կ'ըլլայ կոր: Էտեւէն «գա վախ վախ, ի՞նչ էղաւ աճապած վրան հեւանտութիւն էկաւ գաար», ըսելէն պէլէտիլէին «աս ծառը մեռաւ» տէլիմ թէլէֆօն մը: Հօփ տէլի կու գան, սօրիւտ-սուալ չըրած, կը կարեն կը ինտեն կոր: Մառածաղուր կործ: Առքեղի տըմտըղախ թապախի պէս ծուլու մանգարա:

Անցածները կղզիին վերի փողոցները, մարդու չբեցցած կը պատկէին կոր: Վերով վարով էրկու դրացի կը կիճարանէին կոր: Էն վերինը պարտէզի կիւզէլիմ պէկօնովիւր միւնչէն իրեն թարաքան հանսի տէլիմ չուաններ կը կապէ, բոյսին վրան կը տողայ կոր: Վարինը ըսես նէ, ճիւղերը իրեն մանգարան կոցելու. Հափ էրկիւցան մի, Հախ տէլի կը կտրէ կոր: Մէկ էրկու խօսուըրտեցան, վարինը կիւմ տէլի տուրը կոցեց ներս մտաւ: Ետէն վերի կիւղ էրկանը ըսածը անկաճիս դարկաւ. նէ հէմ փէս ըսի, հէմ մէջս ցաւեցաւ. «Ախ վախնամ քիմ աս կնիկը կիւզէլիմ ծառին տիպը իլաչ պիտի թափէ»: Ասոր ի՞նչ կ'ըսէք:



Սարէն Ձորէն

Ո՞ր ուղղագրութիւնը, ո՞ր առոգանութիւնը

ՍԱՐԳԻՍ ՍԵՐՈՎԱԲԵԱՆ
sseropyan@agos.com.tr

Նախորդ Սարէն-Ձորէնով մեր մնացած քնդէն եթէ շարունակելու ըլլանք, ուսեալ խթանափոխապոօններ ոչ շար երկար ժամանակ առաջ, ցաւօք՝ կորսնցուցած էր պայթական բաղաձայններուն ճիշդ առոգանութիւնը, փոխարէնը պահպանելով դասական կոչումը մետրոպեան ուղղագրութիւնը: Իսկ կովկասահայերը անադարպ պահելով հանդերձ նմանաձայն պայթական բաղաձայններուն հնչումները, ափսոս որ (եթէ չհաշուենք 20-ականներուն կարարուած այլադակութիւնը) 1940-ական քարիններուն ինչ-ինչ սրիպողական քաղաքական պայմաններու քրակ անճանաչելի կերպով փոխած էին դասական կոչումը ուղղագրութիւնը, որու մասին պիտի նախընտրենք չարպայայտուիլ:

Տեղանքի համար պիտի նշենք, օրինակ՝ «սեր» բառը, հարցնելով թէ ի՞նչ պիտի հասկնանք. կաթին սերը, ապա թէ ոչ՝ «է-ով գրուած» սիրելուն սերը: Ուրեմն, երբ (բացի բառակիրքէն) չօգտագործենք «է» քրամը եւ ամէն ինչ գրենք«ե»ով, իրաւ որ ընթերցողը մէջէն չի կրնար ելլել: Ուրիշ օրինակ մը՝ Յակոբն

ու Յովհաննէսը՝ Հակոբ ու Հովհաննէս եթէ գրենք, օր մը մարդուն մէկը երբ լաքինաքառի վերածել փորձէ, ինչ պիտի դնէ այդ սկիզբի «ի»-ին քնդ...Դեռ անելին, Աստուած մի արասցէ, որ ռուսերէնի թարգմանէ...Կակո՞ր պիտի կարդայ, թէ ոչ Կովանէս:

Բայց խոսքովանիքն որ այդ սխալը սրբագրելու պարպականութիւնը արեւելահայուն բաժին կ'իյնայ, անշուշտ արեւմտահայուն ալ օգնութեամբ: Իրականութեան մէջ արեւմտահայ մրատրականութեան, կամ անելի ճիշդ բացաբութեամբ՝ ուսուցիչներուն, գրողներուն անելի դժուար պարպականութիւն մը բաժին կ'իյնայ, որն է հօրաքրոջմէս սկսող սխալը «կամաց-կամաց» սրբագրել. յիշենք մեր նախորդ «Սարէն Ձորէն»ը, ուր կը խօսէինք մեծ մայրիկիս եւ հօրաքրոջս առոգանութեան քրաբերութիւնները, մէկուն «դուրը բաց» ըսածին միւսը կը շարունակէր «քուրը պաց» ըսել, եայն...


Այս կը նշանակէ ոչ թէ վերադառնանք Պոլսոյ հայաքնդին, այլ խօսքով ռամկօրէնին, այլ միայն հայաստանցիներէն պայթական բաղաձայններ անուանուած նմանաձայն քրաներուն քրանք հին արժէքները, այն արժէքները, որ արեն-արեն կու քրայ Լուցիքա Տուրուն, որ կու քրար Սուրբիկ եայաւ, որ քիչ մը ուշ անդրադարձանք, որ ճիշդն էր.-

Կարգով յիշենք.- «բեն, պէ, փիւր» երեք բաղաձայնները, զորս մինչ այսօր կը հնչեն, եւ ալ ճիշդ կը հնչեն արեւելահայ մեր եղբայրները, մենք անոնցմէ մէկը ջնջելով իջեցուցեր ենք երկուքի: Մենք այժմ ունինք միայն պէն եւ բենը, քանի որ փիւրն ալ բենի պէս կը հնչենք: Նոյնը կրնանք ըսել «գիւմ, կեն, քէ», «դա, թօ, քիւն», «ծա, ձա, ցօ», «ճէ, չա, ջէ» եռանկներուն համար, եւ օրինակներով՝ «բրուրն ու փրկիչը» նոյն հնչեղ ձայ-

(դեռ չվերջացաւ)

ԱԿՕՍ

Անիին գաղարնի դռները գտնուեցան



ՍԱՐԳԻՍ ՍԵՐՈՎԱԲԵԱՆ

sseropyan@agos.com.tr

Այս օրերուն դարձեալ խլրպում մը սկսաւ հայկական յուշարձաններու մասին լուրերու կապակցութեամբ։ Օր չ'ըլլար, որ իբր թէ թարմ, բայց հին ճաշափեսակին փաքցուելով ձեր առջեւ բերուելու նման, հին լուրեր կ'իյնան համացանցի կամ ալ փրեղական մամուլի էջերուն։ Օրինակ, Անի քաղաքի մասին մամուլի մէջ լոյս փետած «Անիի փլաքարկներուն սպորերկրեայ գաղարնիքը լուծուեցաւ» խորագրով լուրը, որ կը շարունակէր խորախորհուրդ ենթախորագրերով՝ «Անիի սպորերկրեայ անցքերուն գաղարնի դռները», ապա զգայացունց ենթախորագիր մը եւս, «Անիի գերնափոր մէկ վանքին աղօթքի սենեակը»։ Դեռ չվերջացաւ. «Անիէն ներս 823 սպորերկրեայ շինութիւն եւ քարայր կը գտնուի»։

«Ասորի համեցէ՛ք» ըսել պէքք է Սէգայի Եազըճը անուն պարմաբան հետախոյզին, որ մէկիկ մէկիկ հաշուեր է գերնափոր շինութիւնները, եւ ո՛չ մէկ աւելի, ո՛չ ալ մէկ պակաս... 823 հաւր, յսրակ։ Ապա կարդալով կը տրվիք, որ Եազըճը այս բոլորը ներկայացուցեր է Միջազգային Անիի Սեմփոգիումին՝ «Անիի Սպորերկրեայ Գաղարնիքները» նիւթի առնչութեամբ։ Գաղարնի ջրանցքներ, գաղարնի հողեւորականի խցիկներ, խորհմունքի սենեակներ, հսկայ նկուղներ գիրար հաբող անցքեր,

ծուղակներ, անծայր ու անծիր փապուղիներ, նպարակը անյայտ խորշեր եւ դեռ ինչեր, որոնք Անիի սպորերկրեայ գաղարնիքներուն մէկ մասն են միայն։

Պարմաբան հետազօտողը վերջապէս կը յայտարարէ որ հետաքրքրական եւ ուշագրաւ իր գնկոյցին մասին Թուրքիոյ մէջ մինչեւ այսօր հրաքարակութիւն չէ եղած։

Իսկ Վանին, ժամանակը պէտք է գայ

Անիի մասին մեր գրութեան մէջ շեշտած էինք թուրք պարմաբաններուն յարկապէս, իսկ մտաւորականներուն ընդհանրապէս անփես առնելը պարմական նիւթերու վերաբերեալ հայկական աղբիւրներն ու փաստաթուղթերը։ Լեզուն չգիրնալէ անդին ուրացում եւ սպորագնահատում բուրող այս փեսակէքը ակներեւ էր արեւելեան շրջաններու գիրաշխարողներու մօտ եւ միայն այդ ուղղութեան հետեւողները աշխարելու հնարաւորութիւն կրնային գտնել արեւելքի մէջ։

Նոր նոր սկսան ձեւով մը աջէն ձախէն մուտք գործել պարմաբաններ, հնագէտներ եւայլն, որոնք գտնէ իրենց աշխարութիւններու ընթացքին չեն ուրանար հայոց այս կողմերու հին ներկայութիւնը։

Վանայ Վարազայ վանքի ժամափունի երկրաշարժի վերջին փլուզումէն ետք, վերանորոգման աշխարանքի

ԱՐՏՕՆԱՏԷՐ՝ AGOS YAYINCILIK BASIM HİZMETLERİ SAN. VE TİC. LTD. ŞTİ. անունով՝ Բահիլ Տինք, ՀԻՄՆԱԴԻՐ՝ Հրանդ Տինք, ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՎԱՐԻԶ՝ Ռուպէր Բոփթաշ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱԳԻՐ՝ Ֆերիա Պալանճար, ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՎԱՐԻԶԻ ՕԳՆԱԿԱՆ՝ Գարին Գարագաշլը ՎԱՍՅԷ՝ Հալասքեարկազի Պողոտայ, Սէպաթ Ափթ. 74, յարկաբաժին 1 Օսմանպէշ, Իսթանպուլ։ Հեռաձայն՝ 0212 296 23 64 - 0212 231 56 94 Ֆաքս. 0212 247 55 19 ՏՊԱԳՐՈՒԹԻՆ՝ Տինիա Սիւփեր Վէպ Օֆսէք Ա.Շ. 100. Երլ Մահալլէսի, Պաղճըլար-Իսթանպուլ։ Հեռաձայն՝ 0212 629 08 08 ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ՝ Թուրքիա՝ 6 ամսուան 90 ԹԼ. փարեկան 175 ԹԼ. Երուպա՝ 6 ամսուան 95 Երօ, փարեկան՝ 180 Երօ, Ամրիկա եւ Գանաքա՝ 6 ամսուան 130 Տղար, փարեկան 250 Տղար, Ասպրալիա՝ 6 ամսուան 150 Տղար, փարեկան 275 Տղար։ www.agos.com.tr - agos@agos.com.tr

Ան դեռ կը շարունակէ մի ոմն Կուրճի-յէֆի հետքերէն ընթանալով փրեղեկացեր է, թէ այդ անձը Անին պղելով հասեր է գաղարնի սենեակ մը, ուր ծրար մը մագաղաթ է գրեր։ Լաւ հայերէն գիրցող Կուրճիէֆ այդ մագաղաթը չի կրնար կարդալ, բայց հայ քահանայէ մը ուրիշ քահանայի մը գրուած նամակներ ըլլալը կրցեր է հասկնալ... եւ ի մեծ զարմանք նոյն պարուն Կուրճիյէֆը նամակին մէջ անցնող «սարմուկ» բառէն փրեղեկացեր է 4500 փարուան հնութիւն ունեցող միջագերքեան վարդապետութեան մը մասին։ Կրնամ նկաքել ընթերցողին դեմքին վրայ հեգնական ժպիտը, նոյնիսկ կշարմբարքը՝ անձիս հանդէպ, որ գրելու ուրիշ նիւթ չեմ գրեր։

Ներողութեան ապաիներով երկու խօսք կ'ուզեմ ըսել այդ պարուն ակադեմականին։ Մինչդեռ, Անիի գերնափոր ուղիներուն, աւելի միշոյ ատուքեամբ վիմափոր կառոյցներու մասին, Անիի 1050-ամեակի առթիւ հրաքարակուած 264 մեծադիր էջերով ալպումի մէջ կարելի է գտնել, առաւել հին ու նոր նկարներով ու բացաքրութիւններով։ Մինչ այդ, կարելի է օգտուիլ նաեւ Բարս Թուղլաճըի (Բարսեղ Թուղլաճեան) պաքրասքած եւ թրքերէն հրաքարակած «Արփաշայ վէ Եթրէսի» անուն գիրքէն։

Իսկ եթէ ասոնք նոր կը համարեն, իրենց կը յանձնարարենք, որ կարդան Թորոս Թորամանեանի յեք մահու հրաքարկուած «Նիւթը Հայկական Ճարքարապետութեան Պարմութեան» հսկայ հաբորը, իբրեւ հայ ճարքարապետութեան մասին ընդհանրապէս եւ Անիի մասին յարկապէս, լայնածաւալ ու ամենավստահելի աղբիւր, եթէ երբեք իրենց նախնի «Անի քաղաքի պելուծմե-

րը իրականացնող հիմնարկի» վարիչներուն նման չեն սպորագնահաքեր Թորամանեան վարպերը։

Տեսէք թէ ինչ կ'ըսէ Թորամանեան Անիի բնակիչներուն ո՛ր բնակելուն մասին։

«Պարիսպէն դուրս անթիւ բազմութիւն ո՛ր եւ ի՛նչպէս բնակութիւն հասքարքեր էին, քննենք այժմ այդ հաքը։

Նախ պէքք է նկաքի առնել այն հազարաւոր քարայրները, որոնք խրաքած են Ծաղկոցաճորի, Ալաշաճորի, Գլիճորի եւ Ախուրեանի ձորերու մէջ։

Մեծամեծ քարայրներ կան, որոնց մէջ այսօր երկու հազարէն աւելի ոչխար կը փրեղաւորեն բուրք հովիւներ։ Քարայրները ունին, բացի ընդարձակ սրահներէ, սենեակներէ եւ նրբանցքներէ, նաեւ եկեղեցի եւ քրիմային դամբարան։ Ես կը կարծեմ, որ միջնաքերդի մօք, Ծաղկոցաճորի կողմի «Կիքէն կէմէզ» ըսուածը, դարձեալ մասնաւորի սեփականութիւն, մի ընդարձակ քարայր է, որու մուքքը խափանուեր է փլուզումով, ոչ թէ յարկապէս նեղ բացուած, ինչպէս կը կարծեն ոմանք։

Այս փրեակ հսկայ քարայրներ փորել փալը երբեք հասարակ կամ աղքաք ժողովրդի գործը չէ, անոնց համար հարաքութիւն էր հարկաւոր։

Այս ամենէն աւելի, երբ ի նկաքի ունենաք, որ թշնամիներու յարձակման ժամանակ քարայրները ամենէն ապահով ապասքանակներն էին, այն արելն պիտի համոզուիք, որ աղքաքներէն զաք, հարուստներն ալ իրենց կեանքն ու գոյքը պաշքրպանելու համար քարաքփոր բնակարաններ ունենալու ձգքումը պիտի ունենային»։

Ժամանակ «քերը անյայտ» ըլլալով չէր ձեռնարկուած շինութեան, բայց աւելի վերջ Ֆաքիի Ալթայը անուն լրագրողը որպէս սեփականաքերը, Վարազայ վանքը «Ռ՛վ որ ուզէ կը յանձնեն» ըսելէն յետոյ ո՛չ մէկը փափաքած էր քեր ըլլալ։ Նոյնպէս Աղբակի շրջանի Բարթողիմէոսի վանք-եկեղեցին, որու մասին այնքան մելան վաքնեցինք, գիտուրային իշխանութիւնը լքելէն վերջ, երբ գրօաշրջիկներու համար այցելելը ազաք եղաւ, փանիքի ծածկին փլուզումը մաքը մաքրուելով յարակը բացուած էր, եւ երբ շրջանի յուշարձաններէն պաքասխանաքու պաշքոսեան ձեռնարկած էր այս երկու յուշարձաններուն վերանորոգման ծրագիրներուն ձախսերը ընդունիլ փալու յաշօ պետութեան, փրեղափոխումը էր այլ պաշքոսի մը։



Եւ այսօր, վանեցի սքրցալ լրագրող մը Օգթայ ճանքէմիր կը բողբէ՝ «Վան գիտուրական պահակաքան մէջ մաքած եկեղեցիին վերանորոգութիւն չկալ» խորագրով։ Երկու քարի առաջ նոր «Գալէզօ» մը անցնող գիտուրականին պարպած «Գարագօլ»ին շրջանը իրենց միջեւ բաժնուեր է Մշակոյթի եւ Գրութեան նախարաքութիւններու միջեւ։

Այսօր, երկու քարիէ ի վեր շարժում մը չնկաքելով, երբ հաքք քրուեր է Վանի Շրջանային Միութեան նախագահ Ալի Գալչըքի, ան իր կարգին զանգաքեր է վաքըֆներու Պաշքպանութեան օրէնքէն, որ «կը նպաքակաքրէ այդ հնութիւնները ինքն իր վիճակին լքելով փլուզել ու պաքմութիւնը փճացնել»։ Գալչըք ըսեր է նաեւ, որ «Ացեալին զանոնք (հայերը) բնաշնչեցինք, հիմա ալ պաքմութիւնը ջնջենք, հետքերը փճացնենք, ինքն իրեն թողունք, թող ջրանայ» եւ վերջ...

Գալչըք շարունակելով կը պնդէ թէ՝ նիւթը քանիցս քրաքած են պաքական իշխանութեանց, բայց արդիւնք մը չեն առած. հասարակական կազմակերպութիւններու ջանքերը անքաւաքար մնացած են եւ իրենք խօսակից մը չեն կրցած գտնել։

Պարուն Գալչըք թող աւելի հոգ ջնէ։ Պիտի յանձնաքարենք որ սպասէ ժամանակին զալուն։ Այս պետութիւնը չէ՛ր միթէ, որ Ալթաքմաքը, հոգ չէ թէ Ագքամաքի վերածելով վերանորոգած էր։ 2015 թուականը կը մօքրենայ։ Առիթը կը ներկայանայ եւ պետութիւնը իր անհուն փորքամասնաքիրութեամբ կը սկսի վերանորոգել թէ Բարթողիմիոսը եւ թէ Վարազը...

Ժամանակը պէքք է գալ...

ԲԱՐԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱԴՈՐ ԱՃԽԱՐՅԸ

131

ՆՈՐԱՅՐ ՏԱՏՈՒԻԵԱՆ
ndaduryan@agbumhs.org

ՄԱՏԻՏ

Աղբքանդդէքքրայի նեղիկ ու կամաքաքկապ փողոցները միշք հրապուրիչ եղած են սպուգաքանութեան համար։ Հոն ամէն դուռ, ամէն պաքուիւան ունի միջնաղաքեան բոյր։ Քաղաքը ամբողջութեամբ դրոշմուած է խաչակիր ասպերներու աանդալէպերով։ Տարբեր չեն նաեւ բնակիչները. դեղնորակ ու կապուաքաշօի մարդիկ, որոնք ծոռերն են այդ ասպերներուն։

Սպուգաքանութիւնը հիաքիկ կը քալէ քարաշէն բնակարաններուն առջեւէն, զարմանալով, թէ անոնք ինչպէս մնացին երբ պաքմութեան սասաքիկ քամին փչեց ու փապալեց ամէն բան։ Ան կը փորձէ նաեւ յիշել, թէ ուր էր քունը այդ բարեկամ հնաքվաճառին, որմէ քարիներ առաջ կիկիկեան ձեռագիր եւ դրամ գնած ըլլալու հաճոյքը սաքրած էր։

Սպուգաքանութիւնը կանգ կ'առնէ գեղաքանդակ շէքի մը առջեւ, մէկը՝ քաղաքի ամենահիներէն, որուն զանգակը պղինձէ ձեռք մըն է։

- Պարուն սպուգաքանութիւն, այս ինչ անակնկալ։ Ձեզ ո՛ր հովը հոս նեքեց։

- Արեւելեանը, զեփիա...

Երկուքը ներս կը մտնեն։ Ընդարձակ ու լուսաւոր է նախասրահը, որուն մէջքեղը կայ մեծ սեղան մը։ Սեղանի վրայ դրուած են զանազան հնութիւններ. բիզանդական կանթեղներ, արծաթեայ աշքանակներ, գիրքեր, մրոքած դրամներ...

- Պարուն սպուգաքանութիւն, շաք հետաքրքրական կրոր մը ունիմ, պիտի հիանաք։

-Նավաճառը ցոյց կու քրայ յախճապակի սրուակ մը։

- Նիկիոյ հայ վարպետներու գործ է,- ու մաքիտի մը ծայրով մօքրէն ցոյց կու քրայ անոր բարեմասնութիւնները,- քրեւէք, վրան «Նազաքրէք» գրուած է։ Զանոնք հազուաքհաք ու անկրկնելի դարձնողը սա զարդանախշերու կարմիրն է։ Մինչեւ այսօր գաղարնիք է, թէ վարպետները ինչպէն ձեռք կը ձգէին այդ գոյնը։

- Շաք գեղեցիկ է։ Պէքք է ըսել նաեւ, թէ այս սրուակը իր մէջ կը պարունակէ նաեւ լեզուական գաղարնիքներ։ Անոր կար-

միրը եւ ձեր մաքիտը ունին սպուգաքանական մէկ պաքմութիւն։

«Մաքիտ» բառը իտալերէն է, maciata։ Որպէս փոխառութիւն՝ անոր գործածութիւնը շաք հին չէ մեր լեզուին մէջ։ Յետաղաքձ ակնարկ մը maciata բառին՝ ու կը քրեննէք, թէ ան ունեցած է հարուաք քրիմաճառ. միջին Ֆրանսերէնի hematite, լաքիներէն՝ haematites, յունարէն՝ «էմաքիտիս» (αματεης)։ Բոլորը կու գան «էմաքիտ» հանքանիւթէն, երկաքի կարմրագոյն թթուիտ (Fe2O3)։ Էմաքիտը կ'ունենայ արծաթագոյն, մոխրագոյն, սքճագոյն ու կարմիր երանգներ։ Բառը կազմուած է յունարէն «էմա» եւ «իթոս» արմաքներէն, «արիւն» ու «քար»։ «Մաքիտ»ները այդպէս են կրչուած, որովհետեւ ժամանակին էմաքիտի ձողիկները կը գործածուէին որպէս գրչաճայր։ Իսկ, գալով այս գողքրիկ սրուակին. պաքմութիւնը հոս է, որ հետաքրքրական կը դառնայ։ Անոր բոցավառ կարմիրը կու գայ հայկական լեռնաշխարհին յաքուկ մէկ կաւէն՝ Bolus Armeniacus (Հայկաւ, Armenian Bole, Bole Armoniac), որ իր մէջ բնականօքրն կը պարունակէ... Էմաքիտ։ Նիկիոյ հայ խեցեգործերը 16-րդ դարուն, -մեզի անյայտ

միջոցներով- կարմրորակ հայկաւէն ձեռք կը ձգէին ներկը։ Հայկաւ կը գործածէին նաեւ կազմարարները, կաշեկազմ գիրքերու վրայ վառ ոսկեգոծ քրառեր քրպելու համար։

- Գեղեցիկ, շաք գեղեցիկ յայքնութիւն։ Կրնա՛ք ծրարել։

Սպուգաքանութիւնը սալարկում զառիվաքրերէն նաւամաքոյց կ'իյնէ։ Առազասքրանալին մէջ, նաւավարին կ'ուզէ ցոյց քրալ իր գքրած ընքիր յուշանուէրը։ Կը բանայ հնաքվաճառին պաքրասքրած ծրարը։ Անոր մէջ կը գրնէ սրուակը ու մէկ հաք... մաքիտ։